ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև տրանսպորտի բնագավառում փոխհարաբերությունների հիմնական սկզբունքների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հաշվի առնելով երկու պետությունների միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման կարևորությունը,

ձգտելով բարենպաստ պայմաններ ստեղծել շուկայական հարաբերությունների հետագա զարգացման համար,

ընդունելով, որ տրանսպորտի նորմալ գործունեությունը հանդիսանում է տնտեսության զարգացում և Պայմանավորվող կողմերի արտաքին տնտեսական գործունեության արդյունավետություն ապահովելու կարևոր գործոն,

ցանկանալով փոխադարձության հիմունքներով զարգացնել տրանսպորտի բոլոր տեսակները և ձգտելով ապահովել բարենպաստ պայմաններ Պայմանավորվող կողմերի տարածքների սահմաններում բեռների տեղափոխման և երրորդ երկրների հետ ապրանքաշրջանառության համար,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պայմաններ կապահովի իր տարածքում Կողմերի տրանսպորտային միջոցների երթևեկության, բեռների ու արտադրանքի փոխադրման և պահպանման համար, այդ թվում՝ տարանցմամբ երրորդ երկրներ գնացող, ինչպես նաև իրենց վարչական տարածքներում գտնվող տրանսպորտային հաղորդակցության միջոցներով գազ տեղափոխելու համար:

Նման կարգ է սահմանվում նաև Պայմանավորվող կողմերի օդանավերի կողմից օդային տարածքի օգտագործման համար:

Տարանցիկ բեռների նկատմամբ հսկողության, ինչպես նաև մաքսային տուրքերի գանձման կարգը և այլ մաքսային հարցերը սահմանվում են Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունների միջև՝ առանձին համաձայնագրերով:

Հոդված 2

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում ճանաչում է Կողմերի տարածքներում սահմանված կարգի համաձայն տրված՝

համապատասխան փոխադրումներ և տրանսպորտային-շահագործման գործունեության այլ տեսակներ իրականացնելու լիցենզիաները, տրանսպորտային միջոցին վերաբերող վկայականները և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի որակավորման վկայականները:

Հոդված 3

Մինչև Պայմանավորվող կողմերի կողմից սեփական կանոններ ընդունվելը՝ նրանց տարածքներում պահպանվում է տրանսպորտի աշխատանքը կանոնակարգող՝ գոյություն ունեցող կանոնների, կարգերի, հրահանգների, ստանդարտների տեխնիկական պայմանների և այլ նորմատիվ ակտերի գործողությունը:

Տրանսպորտի աշխատանքը կարգավորող և Պայմանավորվող կողմերի շահերը շոշափող՝ գործող նորմատիվ ակտերի փոփոխությունները և նորերի ընդունումը իրականացվում են Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից՝ նրանց միջև համաձայնեցմամբ:

Հոդված 4

Տրանսպորտի բնագավառում փոխգործակցության հարցերը լուծելու համար Պայմանավորվող կողմերը իրավասու մարմիններին կհանձնարարեն մշակել հատուկ համաձայնագրեր երկաթուղային վագոնների և բեռնարկղերի պարկի օգտագործման մասին, Պայմանավորվող կողմերի ձեռնարկություններին պատկանող նավթամթերքների արտահանման և դատարկ ցիստեռնների վերադարձման մասին, ինչպես նաև երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտի գործունեության հետ կապված այլ հարցերով:

Հոդված 5

Բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող են ծագել սույն Համաձայնագրի առանձին հոդվածների մեկնաբանման կամ կատարման հետ կապված, Պայմանավորվող կողմերի միջև կլուծվեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է այնքան ժամանակ, մինչև Պայմանավորվող կողմերից մեկը օրացուցային տարվա ավարտից երեք ամիս առաջ հայտարարի Համաձայնագիրը փոփոխելու կամ դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Աշգաբատ քաղաքում 1992 թվականի հոկտեմբերի 15-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և թուրքմեներեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի հոկտեմբերի 15-ից: